



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 20/21

08.09.2021թ.

ք. Երևան

ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և դրա հետ փոխկապակցված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) և դրա հետ փոխկապակցված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների համապատասխանությունը Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 78-րդ, 79-րդ և 173-րդ հոդվածներին:

Ըստ Դիմողի՝ անկախության ու անաչառության պահանջները սերտորեն փոխկապակցված են: Դատարանի անկախության կուրուլյատիվ չափորոշիչների թվում է, *inter alia*, դատարանի, որպես անկախ մարմին, ընկալվելը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ ՄԻԵԴ) մանրամասն անդրադարձել է նաև դատարանի որպես անկախ մարմին ընկալվելու չափորոշիչն՝ նշելով, որ կարևոր է ոչ միայն դատարանի փաստացի անկախությունը, այլ այն, թե որքանով է դատարանը անկողմնակալ դիտորդի կողմից ընկալվում որպես անկախ (ՄԻԵԴ, Շահիններն ընդդեմ Թուրքիայի, 44, Կլարկն ընդդեմ Մեծ Բրիտանիայի): Օրենքով նախատեսված

կարգավորումներով ԲԴԽ-ին տրվում է լիազորություն ստեղծելու դատավորների որոշակի ներքին մասնագիտացում՝ հիմնված, *inter alia*, գործերի «բարդության» վրա: Առանձին բարդության գործերի ցանկը ենթակա է մշակման ԲԴԽ-ի կողմից: Ընդ որում, դատավորները քննելու են առանձին բարդության գործերն ի լրումն այլ գործերի և, հետևաբար, պարզ չէ, թե դատարանների գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից ինչ նպատակ է հետապնդում նման կարգավորումը: Հարկ է ընդգծել, որ «գործի բարդության» եզրույթն գնահատողական է, և Օրենքով նախատեսված չեն օբյեկտիվ չափանիշներ, որոնց հիման վրա հնարավոր կլիներ որոշել առանձին քաղաքացիական, վարչական և քրեական գործերի բարդության աստիճանը: Իսկ ոլորտային օրենսդրության վերլուծությունը հիմք է տալիս եզրահանգել, որ գործի բարդության աստիճանը գնահատելու համար առնվազն անհրաժեշտ է տվյալ պահի դրությամբ մանրամասն տիրապետել տվյալ գործի նյութերին և դրա փաստական հանգամանքներին, որոնք յուրաքանչյուր դեպքում տարբեր են: Ընդ որում, հարկ է նաև հաշվի առնել, որ գործի բարդությունը կայուն երևույթ չէ: Այս համատեքստում պարզ չէ նաև օրենքի 2-րդ հոդվածով նախատեսվող «առանձին բարդության գործերի ցանկ» հասկացության իրավական բովանդակությունը:

Օրենքի քննարկվող կարգավորումները կարող են հանգեցնել նաև դատավորների միջև գործերի կամայական բաշխմանը, ինչը նահանջ է դատավորների միջև գործերի՝ օբյեկտիվ չափանիշի հիման վրա բաշխման հիմնարար պահանջից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դիմողը գտնում է, որ Օրենքի 2-րդ հոդվածով նախատեսվող կարգավորումներն առերևույթ խնդրահարույց են Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի, 63-րդ հոդվածի 1-ին մասի և 79-րդ հոդվածի համատեքստում:

ԲԴԽ-ին միաժամանակ կարգապահական վարույթ հարուցելու, վարույթը քննելու և պատասխանատվության ենթարկելու գործիքակազմով օժտելը խնդրահարույց է նրա՝ որպես անկախ և անկողմնակալ դատարան հանդես գալու առաքելության համատեքստում: Անկողմնակալ դիտորդի մոտ ողջամտորեն կարող է ձևավորվել կարծիք, որ նույն մարմնի կողմից համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի դիմումին ընթացք տալուց արդեն իսկ որոշակի կանխակալ վերաբերմունք կարող է դրսևորվել ապագայում կայացվելիք՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշման առնչությամբ:

Օրենքի համապատասխան կարգավորումները նախատեսելիս դրանց կիրառման հետևանքով դատական իշխանության գործունեության արդյունավետության վրա հնարավոր բացասական ազդեցությունը հաշվի չի առնվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դիմողը գտնում է, որ Օրենքի 12-րդ հոդվածի և դրա հետ փոխկապակցված հոդվածներն առերևույթ խնդրահարույց են Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի, 61-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև 173-րդ հոդվածի համատեքստում:

Անդրադառնալով ՔԴՕ լրացումներին՝ Դիմողն ընդգծում է, որ ՔԴՕ լրացումներով որևէ հստակեցում իրականացված չէ, թե՛

- ո՞ր պարտականությունները խախտելու դեպքում կարող է կիրառվել կամ խստացվել խափանման միջոցը.

- ի՞նչ է նշանակում «պարտականությունը չարամտորեն չկատարել».

- ինչպե՞ս է որոշվելու պարտականությունը չկատարելու և խափանման միջոցի միջև տրամաբանական կապն ու համաչափությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դիմողը գտնում է, որ ՔԴՕ լրացումների 1-ին հոդվածն առերևույթ խնդրահարույց է Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածների համատեքստում:

Անդադառնալով նաև ՔԴՕ լրացումների 2-րդ հոդվածի վերլուծությանը Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին, 78-րդ և 79-րդ հոդվածների համատեքստում՝ Դիմողը նշում է, որ անձի կողմից իր դատավարական իրավունքների չարաշահման պարագայում դատական սանկցիայի կիրառման ինստիտուտն ունի հիմքեր իրավական տեսության մեջ: Մինևույն ժամանակ, նման սահմանափակում սահմանելիս, օրենքը պետք է համապատասխանի որոշակիության և համաչափության սկզբունքներին, ինչպես նաև լինի հիմնավորված, նպատակային և տրամաբանական: Դատավարության մասնակիցների, ընդհանուր առմամբ, և մասնավորապես, փաստաբանների կողմից իրենց իրավունքների ազատ իրացման երաշխիքները յուրաքանչյուր անձի՝ իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի հիմքում են: Այս համատեքստում վերլուծելով ՔԴՕ լրացումների կարգավորումները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող խմբագրությամբ օգտագործվող եզրույթներն առերևույթ խնդրահարույց են Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված որոշակիության սկզբունքի համատեքստում: Մասնավորապես,

ՔԴՕ լրացումներով դատարանի որոշմամբ կարող են սահմանվել դատավարական իրավունքների իրականացման ժամանակային կամ քանակական պայմաններ: Միննույն ժամանակ, ՔԴՕ լրացումներով հստակեցված չեն չափորոշիչները, որոնք պետք է կիրառվեն՝ որոշելու, թե որն է իրավունքի չարաշահումը և երբ այն կարող է համարվել «պարբերական», հստակեցված չէ նաև ինչ ծավալով կամ չափով կարող է կիրառվել համապատասխան սահմանափակումը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) և դրա հետ փոխկապակցված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների համապատասխանությունը Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 78-րդ, 79-րդ և 173-րդ հոդվածներին:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար

չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն՝

Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը:

Քանի որ վիճարկվող նորմերը ծավալուն են, ներկայացնենք դրանց հակիրճ բովանդակությունը և անդրադառնանք վերջիններիս սահմանադրականությանը՝ առանձին-առանձին:

Այսպես.

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում իրականացվող փոփոխությունների հակիրճ բովանդակությունը.

Ազգային ժողովի՝ 2021 թվականի մարտի 19-ի նիստում ընդունված օրենքի 2-րդ հոդվածով առաջարկվող՝ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 21-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի նոր խմբագրության համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդը (այսուհետ՝ ԲԴԽ) վարչական, քաղաքացիական և քրեական մասնագիտացման դատավորներից կարող է ընտրել դատավորներ, որոնք, ի լրումն համապատասխան մասնագիտացման գործերի, քննում են առանձին տեսակի կամ բարդության գործեր: Առանձին տեսակի կամ բարդության գործերի ցանկը, գործեր քննող դատավորների քանակը և ընտրության կարգը սահմանում է ԲԴԽ-ն: Օրենքով նախատեսված չեն կարգավորումներ, թե ինչ չափանիշների պետք է համապատասխանեն առանձին բարդության գործեր քննող դատավորները կամ ինչպիսի լրացուցիչ մասնագիտական որակներ պետք է ունենան:

Օրենքի 12-րդ հոդվածով առաջարկվում է Օրենսգիրքը լրացնել 148.1-ին հոդվածով, որը կանոնակարգելու է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով ԲԴԽ դիմում ներկայացնելու հետ կապված հարաբերությունները: Վերոնշյալ հոդվածի 1-ին մասի համաձայն դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով ԲԴԽ դիմում կարող է ներկայացնել ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ցանկացած պահի, այդ թվում՝ իր գործի դատաքննության ընթացքում և այդ թվում՝ առանց փաստաբանի կամ ներկայացուցչի, իր մասնակցությամբ կոնկրետ գործով, եթե առաջին հայացքից առկա է

Դատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետով նախատեսված էական կարգապահական խախտման հիմք, և պահպանված են սահմանված ժամկետները: ԲԴԽ-ն պարտավոր է դիմումն ընդունել քննության, եթե դիմումն ակնհայտ անհիմն չէ, և եթե բացակայում են Բարձրագույն դատական խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու հիմքերը: Այսինքն, Օրենքով նախատեսվում է բավականին ցածր շեմ՝ ԲԴԽ-ի կողմից գործը քննության ընդունելու համար: Դիմումը ներկայացրած անձի կողմից այն կարող է հետ վերցվել՝ մինչև ԲԴԽ-ի խորհրդում հարցի քննությունը սկսելը: ԲԴԽ-ն քննում է միջնորդությունը կամ դիմումը այն քննության ընդունելու պահից՝ եռամսյա ժամկետում:

Օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ հոդվածները փոխկապակցված են Օրենքի 12-րդ հոդվածով առաջարկվող կարգավորումների հետ:

Սահմանադրությամբ 61-րդ և 63-րդ հոդվածներով երաշխավորված է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը անկախ և անաչառ դատարանի կողմից: Այսինքն՝ Սահմանադրությամբ նախատեսված է դատարանի անկախ և անաչառ լինելու սահմանադրական երաշխիքը: Անկախ և անաչառ դատարանի կողմից գործի քննության պայմանը, որպես արդար դատաքննության իրավունքի առանցք, նախատեսված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 6-րդ հոդվածով:

Սահմանադրության 61-րդ հոդվածի և 63-րդ հոդվածի սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում: Նշված որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային

պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը: Այսինքն՝ պետությունը պարտավոր է ձեռնարկել այնպիսի մեխանիզմներ, որոնք կերաշխավորեն անկախ և անաչառ դատարանի կողմից գործի քննությունը, պետությունը պետք է զերծ մնա անկախությանն ու անաչառությանը արհեստականորեն խոչընդոտող, դրանք սահմանափակող, դատավորներին կաշկանդող մեխանիզմների՝ դատական համակարգում ներդրումից:

Ինչպես Դիմողն իրավացիորեն նկատել է, Օրենքով նախատեսված կարգավորումներով ԲԴԽ-ին տրվում է լիազորություն ստեղծելու դատավորների որոշակի ներքին մասնագիտացում հիմնված, *inter alia*, գործերի «բարդության» վրա: Առանձին բարդության գործերի ցանկը ենթակա է մշակման ԲԴԽ-ի կողմից: Ընդ որում, դատավորները քննելու են առանձին բարդության գործերն ի լրումն այլ գործերի և, հետևաբար, պարզ չէ, թե դատարանների գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից ինչ նպատակ է հետապնդում նման կարգավորումը: Հարկ է ընդգծել, որ «գործի բարդության» եզրույթը գնահատողական է, և Օրենքով նախատեսված չեն օբյեկտիվ չափանիշներ, որոնց հիման վրա հնարավոր կլիներ որոշել առանձին քաղաքացիական, վարչական և քրեական գործերի բարդության աստիճանը: Գործի բարդության աստիճանը գնահատելու համար առնվազն անհրաժեշտ է տվյալ պահի դրությամբ մանրամասն տիրապետել տվյալ գործի նյութերին և դրա փաստական հանգամանքներին, որոնք յուրաքանչյուր դեպքում տարբեր են:

Բացի դա, անհրաժեշտ է հաշվի առնել, որ գործի բարդությունը կայուն երևույթ չէ: Այս համատեքստում պարզ չէ Օրենքի 2-րդ հոդվածով նախատեսվող «առանձին բարդության գործերի ցանկ» հասկացության իրավական բովանդակությունը:

Եվրոպայի խորհրդի շրջանակներում գործող եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԽԽ) մտահոգություն է հայտնել, որ մասնագիտացված դատարանի (դատավորների) առանձնացումը կարող է նպաստակ հետապնդել դատավորների որոշակի խումբ առանձնացնել ընդհանուր դատավորներից՝ վերջիններիս կողմերի, շահագրգիռ խմբերի կամ պետաիշխանական լիազորություններով օժտված մարմինների ճնշմանը ենթարկելու համար: ԵԴԽԽ-ն ընդգծում է, որ պետք է հստակ տարանջատվի, երբ դատական մասնագիտացումն իրականացվում է որոշ իրավական ոլորտների առանձնահատուկ բարդությամբ պայմանավորված, այն դեպքերից, երբ ստեղծվում են հատուկ, ad hoc կամ արտակարգ դատարաններ՝ ինչ-որ կոնկրետ հանգամանքներով պայմանավորված, քանի որ այդպիսի դատարանները մեծ հավանականությամբ չեն համապատասխանի ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով նախատեսված պահանջներին:

Օրենքում օգտագործվող «գործի բարդություն» եզրույթը չի համապատասխանում Սահմանադրության 79-րդ հոդվածով երաշխավորված իրավական որոշակիության սկզբունքին, որի կապակցությամբ Սահմանադրական դատարանը 2019 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-1452 որոշման մեջ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Իրավական որոշակիության սկզբունքն ընկած է Սահմանադրության անփոփոխելի 1-ին հոդվածի հիմքում, որով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Իրավական պետությունը ենթադրում է իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի հնարավորինս հստակ ու որոշակի և հնարավորություն տա դրա հասցեատերերին ձևավորելու և դրսևորելու համապատասխան վարքագիծ: Վերոնշյալ դիրքորոշումը հաստատվում է Սահմանադրական դատարանի 08.04.2008թ. ՍԴՈ-753 որոշմամբ, որում, մասնավորապես, նշվում է. «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն

ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը»:

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանն իր մեկ այլ՝ ՄԴՈ-1176 որոշմամբ կարևորել է նաև օրենսդրության մեջ կիրառվող հասկացությունների հստակությունը, նշելով, որ «...իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության»:

Ամփոփելով Օրենքով առաջարկվող լրացումները՝ գտնում ենք, որ դրանց՝ պրակտիկայում կիրառման հետ կապված մի շարք խնդիրներ կառաջանան, մասնավորապես, պարզ չէ, թե ինչի չափանիշներով է որոշվելու, թե որ դատավորը որ գործը քննելու հարցում է մասնագիտացված, ինչ կարգով է իրականացվելու գործերի բաշխումը, ինչ նպատակ է հետապնդում օրենսդրի նման մոտեցումը, դրանով սահմանադրական ինչ նպատակի կհասնի կամ ինչ խնդիր կլուծվի, միաժամանակ՝ դատավորի ճնշում է դատավորների նկատմամբ, առանձին դատավորների գործող իշխանության կամակատարներ դարձնելու հավանականություն և վտանգավորություն ունի և, ի վերջո, չի բխում սահմանադրորեն երաշխավորված՝ դատարանի անկախ լինելու սկզբունքից: Օրենքի քննարկվող կարգավորումները կարող են հանգեցնել նաև դատավորների միջև գործերի կամայական բաշխմանը, ինչը նահանջ է դատավորների միջև գործերի՝ օբյեկտիվ չափանիշի հիման վրա բաշխման հիմնարար պահանջից: Այս առումով Դատական իշխանության և դատավորների անկախության վերաբերյալ զեկույցում գործերի՝ օբյեկտիվ չափանիշի հիման վրա բաշխումը «ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) դիտարկել է իբրև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված «օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարանի» կողմից գործի քննության հիմնարար պահանջի տարր (73-81-րդ կետեր): Դատարանի անկախության չափորոշիչների վերլուծության համատեքստում ՄԻԵԴ-ը դիտարկել է գործերի բաշխման ընթացակարգը՝ որպես դատարանի անկախության նախապայմաններից մեկը (Մոխսենն

ընդդեմ ՌԴ-ի, թիվ 62936/00, 2008 թվականի հոկտեմբերի 9, 176-րդ պարբերություն):
Նշվածը չի համապատասխանում նաև Սահմանադրության 164-րդ հոդվածին
(դատավորի կարգավիճակը):

Ինչ վերաբերում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմի
դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով ԲԴԽ
ցանկացած պահի դիմում ներկայացնելու հետ կապված հարաբերություններին, ապա
դա, իր հերթին, լի է դատարանի վրա ավելորդ ճնշում գործադրելու ռիսկով, իսկ ԲԴԽ-ին
վերաքննիչ դատարան դարձնելու տեսլականով, քանի որ քաղաքացիները սկսելու են
ըստ իրենց կարծիքի դատարանի կողմից դատական սխալ թույլ տալու դեպքում
դատական ակտերը բողոքարկել ոչ թե վերաքննության կարգով, այլ միանգամից ԲԴԽ:
ԲԴԽ-ն, իր հերթին, պարտավորված լինելով ժամկետում ներկայացված նման
դիմումներն ընդունել վարույթ, իր հիմնական սահմանադրական պարտականությունը
(դատարանների և դատավորների անկախության երաշխավորումը) թողնելու է մի կողմ
և զբաղվի այն գործերի քննությամբ, որոնք հնարավոր է, որ լուծում ստանային
վերաքննության կարգով բողոքարկման դեպքում: Իսկ դատավորի սխալի դեպքում ԲԴԽ
դիմելու իրավունք ֆիզիկական և իրավաբանական անձինք այսպես, թե այնպես ունեն, և
նման նոր մեխանիզմներ ներդնելու, այն էլ ԲԴԽ ներկայացվող դիմումի վարույթ
ընդունման նման ցածր շեմ սահմանելու օրենսդրական անհրաժեշտություն չկա: Օրենքի
կարգավորումներն ուղղակիորեն հանգեցնելու են թե՛ ԲԴԽ-ի, թե՛ առանձին
դատավորների անհարկի և անհիմն գերծանրաբեռնվածությանը:

2. «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում
լրացումներ կատարելու մասին» օրենքի (այսուհետ՝ ՔԴՕ լրացումներ) հակիրճ
բովանդակությունը.

ՔԴՕ լրացումների 1-ին և 2-րդ հոդվածներով առաջարկվում է Հայաստանի
Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք)
լրացնել համապատասխանաբար «Ոչ իրավաչափ վարքագծի արգելքը» և «Որոշակի
դատավարական իրավունքների իրականացման սահմանափակումը» վերտառությամբ
20.1-ին և 314.4-րդ հոդվածներով:

ՔԴՕ լրացումների 1-ին հոդվածով լրացվող 20.1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն՝
«Մեղադրյալի կողմից իր պարտականությունները չարամտորեն չկատարելու դեպքում

նրա նկատման կարող է կիրառվել խափանման միջոց, կամ կիրառված խափանման միջոցը կարող է փոխարինել ավելի խիստ միջոցով»:

ՔԴՕ լրացումների 2-րդ հոդվածով լրացվող 314.4-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ որոշակի դատավարական իրավունքների իրականացման սահմանափակումը անձի կողմից իր դատավարական իրավունքների պարբերաբար չարաշահման դեպքում դատարանի որոշմամբ դրանց իրականացման ժամանակային կամ քանակական պայմանների սահմանում է: Նշյալ դատավարական սանկցիան կարող է կիրառվել հետևյալ իրավունքները պարբերաբար չարաշահելու դեպքում՝ միջնորդություն հարուցելը, բացարկ հայտնելը, քրեական գործին կցելու և հետազոտելու համար նյութեր ներկայացնելը, քրեական գործի նյութերին ծանոթանալը և դրանցից ցանկացած ծավալի տեղեկություն դուրս գրելը, էլույթ ունենալը, պաշտպանից հրաժարվելը, պաշտպանի լիազորությունները դադարեցնելը:

Այսպես, ինչպես Դիմողն իրավացիորեն նկատում է, ՔԴՕ լրացումների 1-ին հոդվածով լրացվող 20.1-ին հոդվածի 4-րդ մասի սահմանման նպատակը անհասկանալի է: Քրեական դատավարության օրենսգրքի 98.8-րդ հոդվածի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը օրենքով սահմանված կարգով կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ ընտրում է խափանման այնպիսի միջոց, որ կբացառի բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը, ինչի մասին կայացվում է պատճառաբանված որոշում: Որոշման մասին տեղեկացվում է նաև պաշտպանվող անձը: Քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի համաձայն՝ եթե մեղադրյալը խախտում է իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները, քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի որոշում ընդունել տվյալ անձին ձերբակալելու մասին՝ միաժամանակ նրա կալանավորման մասին միջնորդություն ներկայացնելով դատարան, ընդ որում՝ մեղադրել այս կարգով իրականացվող ձերբակալում թույլատրվում է միայն այն դեպքում, երբ Քրեական դատավարության օրենսգրքի դրույթները թույլ են տալիս նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանքը: Օրենսգրքի նման կանոնները մշակված են՝ հաշվի առնելով Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության և 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքները: Քրեական դատավարության տեսության հիմնարար դրույթներից հայտնի է, որ խափանման միջոցը պատիժ չէ, իսկ

մեղադրյալի կողմից իր պարտականությունները չարամտորեն չկատարելը Օրենսգրքով նախատեսված հանցագործություն չէ:

Մեղադրյալի պարտականությունները սահմանված են Օրենսգրքի 65-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ներառելով հետևյալ պարտականությունների սպառիչ ցանկը.

1) Ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով.

2) լինելով կալանավորված՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել անձնական խուզարկության.

3) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել բժշկական ստուգման, մատնադրոշմման, լուսանկարվել և հնարավորություն ընձեռնել վերցնելու այրան, մարմնի արտաթորությունների նմուշներ.

4) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել քննման և փորձաքննության.

5) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատավորի իրավաչափ կարգադրություններին.

6) մինչև ընդմիջում հայտարարելն առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը

7) դատարանի նիստում պահպանել կարգուկանոն

Խափանման միջոցներն, ըստ Օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի, հետևյալն են.

1) կալանավորումը.

2) գրավը.

3) ստորագրություն չհեռանալու մասին.

4) անձնական երաշխավորությունը.

5) կազմակերպության երաշխավորությունը

6) հսկողության հանձնելը

7) հրամանատարության հսկողության հանձնելը:

ՔԴՕ լրացումների 1-ին հոդվածով լրացվող 20.1-ին հոդվածի 4-րդ մասի խմբագրության վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ օրենսդիրը դիտարկում է խափանման միջոցը որպես մեղադրյալի կողմից իր պարտականությունները չարամտորեն չկատարելու համար պատիժ: Այսպես, նշված կարգավորման համաձայն, եթե, օրինակ, մեղադրյալի նկատմամբ կիրառված չէ որևէ խափանման միջոց՝ խափանման միջոց կիրառելու հիմքերի բացակայությամբ պայմանավորված, բայց այդ

մեղադրյալը չարամտորեն հրաժարվում է, օրինակ, քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել բժշկական ստուգման կամ հնարավորություն ընձեռնել վերցնելու իր մարմնի արտաթորությունների նմուշներ, ապա նրա նկատմամբ կարող է կիրառվել, օրինակ, ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը: Կամ եթե, օրինակ, այդ մեղադրյալի նկատմամբ կիրառված է ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը, ապա այն կարող է փոխարինվել ավելի խիստ խափանման միջոցով:

Հարկ է ընդգծել, որ ՔԴՕ լրացումներով որևէ հստակեցում առկա չէ առ այն, թե.

- ո՞ր պարտականությունները խախտելու դեպքում կարող է կիրառվել կամ խստացվել խափանման միջոցը.

- ի՞նչ է նշանակում «պարտականությունը չարամտորեն չկատարել».

- ինչպե՞ս է որոշվելու պարտականությունը չկատարելու և խափանման միջոցի միջև տրամաբանական կապն ու համաչափությունը:

Անձի կողմից իր դատավարական իրավունքների չարաշահման պարագայում դատական սանկցիայի կիրառման ինստիտուտն ունի հիմքեր իրավական տեսության մեջ: Դատավարության մասնակիցների ընդհանուր առմամբ, և մասնավորապես, փաստաբանների կողմից իրենց իրավունքների ազատ իրացման երաշխիքները յուրաքանչյուր անձի՝ իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի հիմքում են:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման մեջ նշել է. «6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1–ին մաս): Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման

գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսինքն՝ անձը, դիմելով դատարան, պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեզվտիմ ակնկալիքով:

Անդրադառնալով համաչափության սկզբունքին՝ 2007 թվականի փետրվարի 7-ի ՄԴՈ-677 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «...Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար»:

2001 թվականի հունվարի 11-ի ՄԴՈ-278 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «6. Տվյալ դեպքում, նման սահմանափակում նախատեսող օրենքներում պետք է հաշվի առնվեն հետևյալ հանգամանքները. ա) հարաբերությունների սահմանման և կարգավորման առումով օրենքը պետք է լինի առավելապես ընդհանուր և վերացական, քան կոնկրետ հասցեագրված, բ) նախատեսվող սահմանափակումները պետք է լինեն համաչափ և բխեն ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ ազգային օրենսդրության ժողովրդավարական սկզբունքների էությունից, գ) սահմանափակումները չպետք է լինեն այնպիսին, որոնք վտանգեն մարդու իրավունքների հիմնական բովանդակությունը»:

Անդրադառնալով նաև իրավունքների սահմանափակման համաչափությանը՝ 2015 թվականի դեկտեմբերի 8-ի ՄԴՈ-1244 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշում է. «... Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք արգելք չհանդիսանան (կամ՝ չսահմանափակեն) սահմանադրական իրավունքների ազատ իրացմանը, եթե այդպիսի իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և համաչափ չէ իրավաչափ նպատակին»:

ՔՂՕ լրացումների արդյունքում սահմանափակումներ են դրվելու կողմերի՝ օրինակ՝ միջնորդություններ ներկայացնելու, բացարկներ հայտելու իրավունքի վրա, և առաջարկվող լրացումների ոչ որոշակի լինելու արդյունքում հնարավոր է, որ տարբեր առարկա և հիմք ունեցող միջնորդությունների ներկայացումը դիտվի որպես այդ դատարավական իրավունքի պարբերաբար չարաշահում և սահմանափակվի: ՔՂՕ լրացումների վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ դրանք չեն բխում ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ ազգային օրենսդրության ժողովրդավարական սկզբունքների էությունից և քրեական դատավարության սկզբունքներից և անկասկած հանգեցնելու են անձի՝ սահմանադրորեն երաշխավորված արդար դատաքննության իրավունքի ոտնահարմանը և անհիմն սահմանափակմանը, արգելք են հանդիսանալու նշված իրավունքի իրացման համար, պիտանի, բավարար և իրավաչափ չեն Սահմանադրությամբ սահմանված նպատակներին հասնելու համար, չեն համապատասխանում նաև իրավական որոշակիության սկզբունքին:

3. Ինչ վերաբերում է «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքին, ապա այն վերաբերում է դատավորին կարգապահական

պատասխանատվության ենթարկելու հարցով ԲԴԽ դիմելու համար բազային տուրքի տասնապատիկի չափով պետական տուրքի գանձմանը և դրա հետ կապված հարաբերություններին:

Հիմք ընդունելով վերը նշվածը և հաշվի առնելով, որ «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքը բխում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքից, իսկ, մեր կարծիքով, առաջարկվող լրացումները Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց են, ուստի «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի սահմանադրականությանն անդրադառնալու անրաժեշտություն չկա:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ առաջարկվող փոփոխությունները և լրացումները խաթարում են և՛ դատարանների անկախության սկզբունքը, և՛ անկախ ու անաչառ դատարանի կողմից գործի քննության իրավունքը, դրանք չեն բխում իրավական որոշակիության և համաչափության սկզբունքներից, պարունակում են դատավորներին առանձին գործերով կաշկանդելու մեծ ռիսկ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և դրա հետ փոխկապակցված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների համապատասխանությունը Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 78-րդ, 79-րդ և 173-րդ հոդվածներին խնդրահարույց է:

 Recoverable Signature

Համակարգող՝

X Lyudvik Davtyan

Լյուդվիկ Դավթյան

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169